

ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա Ռ Ո Ղ Զ Ո Ւ Թ Ե Ս Ն

(Հարաձայնութիւն, տես թիւ 7)

Նոյնպէս և ՚ի մէջ պտղոց են, որք են աննդարար և դիւրամարս, այսինքն խնձոր, սերկեւելի, ծիրան, թուզ, թութ, խաղող, դեղձ, արմու, և այլն: Այլ են՝ որք են աննդարար, այլ նուազ ստամբասաց յոյժ մնասակար, այսինքն՝ նուշ, ընկոյզ, կաղին, չափա նակ, և այլն: Այլ են՝ որք են յոյժ զւ վարար, այսինքն՝ նուռն, տանձ, շոր, նարինջ, լիմոն, սեխ, մեղրապտղ, վաբուռնգ, և այլն, զորս պարտ է միշտ խնամով ՚ի կիր առնուլ: Օ ՚ի զոր ինչ և իցէ, որչափ և բարի իցէ, մնաս է՝ յորժամ առնուցու անտի չափազանց: Այլ ներհակ այսմ, անսուղջ և մնասակար ինչ՝ ոչ այնպէս մնասէ, յորժամ առնուցու չափաւոր:

Արդ՝ առ ՚ի որոշել զզանազան տեսակիս կերակրոց, և ՚ի բացատրել զնոցին բնութիւն և որպիսութիւն, և ՚ի ցուցանել զնոցին ներգործութիւն ՚ի վերայ զանազան կազմուածոց, անցանէ անդ բան զչափ սահմանի ստորադրութեան մերոյ, վասն որոյ փոխանակ առաջի առնելոյ զմանրամասն պարագայս այնոցիկ, որք ոչ դիւրեաւ իմասցին ՚ի հասարակաց, և ոչ եւս բազումք մտադիր լիցին, այլ մեզ փոյթ կացուք գնել աստ առաջի ամենեցուն զյետապայ դիւրին կանոնս ընտրութեան կերակրոց վասն պէսպէս կազմուածոց և հանգամանաց դրութեան անձին:

Օրր օրինակ:

Այնպիսիք՝ որոց թանձրագոյն մարն մարմնոց է նուազ և թույլ, պարտին

՚ի բաց կալ յամենայն մածուցական և դժուարամարս կերակրոց, այլ կերակուր նոցա պարտ է լինիլ աննդարար և դիւրամարս, և պահել միշտ զկրթութիւն յամենայն առաւօտու ՚ի բաց օդի:

Այլ որք առատ են արեամբ, պարտին ամենայն զբուշութեամբ ՚ի բաց կալ ՚ի ճարպոյլից կամ իւղալի կերակրոց, և ՚ի զորաւոր բնութեաց, որք են օղի, գինի, գարեջուր, և այլն, այլ կերակուր նոցա պարտ է լինիլ հաց և դարձորէք և զովարար պտուղք, և բնութիւն նոցա՝ ցուրտ ջուր, շիջուկ կաթին, օշարակ ՚ի հիւթոց պտղոց, և թեթեւ գարեջուր:

Այլ որ պարարտ է, չէ պարտ նմա աղատօրէն առնուլ զիւղալի և կարի աննդարար կերակուրս, այլ առցէ նա յաւէտ շողգամ, ստեպոլին, կաղամբ, բողի, զխստոր և զայլ համեմունս ՚ի յորդել զքրտունս և սրտձառել բաւակ զմիզումն. իսկ բնութի նորա իցէ բաց ՚ի ջրոյ՝ թէյ և սուրճ կամ զաֆէ, և այլն, պահեցէ և միշտ ըզկրթութիւնն ՚ի բաց օդի, և ննջիցէ յոյժ սակաւ:

Այլ նորա՝ որք են նիհար, կեցցեն ըստ ամենայնի ներհակ կանոնի պարարտ անձանց:

Իսկ որք նեղին ՚ի կծուութենէ կամ ՚ի թթուութենէ ստամբասաց, պարտին կեալ առաւելուպէս անասնոցին մտեղինօք և ՚ի բաց կալ յամենայն զորաւոր բնութեաց, կամ առնուլ երբէք զթէյ կամ զզաֆէ, բայց և մի զանց արասցեն յամենայն առաւօտու ըզղանալ և առնուլ զկրթութիւն ՚ի բաց օդի:

Այլ որք ունին զյօդացաւութիւն, նուազութիւն և ախտ ախտնդանաց կամ յարգանդի, պարտին ՚ի բաց կալ յամենայն փքարար, մածուցական և

դժուարամարս կերակրոց . նոյնպէս և յամենայն աղետ և ճխտալ մտոց . և յայնց ամենից , որք են ատիպ , բարի կծու և թթու : Այլ այսպիսեաց կերակուր պարտ է լինիլ թեթեւ , դիւրամարս , չափաւոր , սառն , և բնութեամբ լուծողական :

Այլ որք նեղին յանմարսողութենէ կերակրոց և ՚ի պահասութենէ անոր ժակի , պարտին ըստ ամենայնի կեալ թեթեւ և դիւրամարս կերակրովք , և ՚ի բաց կալ ՚ի զօրաւոր ըմպելեաց : Արեւակուր նոցա լիցի սակաւ հաց , կաթ թամբ եփեալ բրինձ , ապուր և դարբիք : Այլ ըմպելիք նոցա իցէ հում կաթն կովու և ցուրտ ջուր , և պահեցի միշտ կարգաւ լուղանան յառաւօտու և կրթութիւն ՚ի բաց օդի :

Այլ միայն պարտ է կերակրոց լինիլ պատշաճ հասակի և կազմեաւ մարդկանայ և ըստ հանգամանաց կեցութեան նոցա , քանզի նստողական և ուսումնասիրական անձինք պարտին կեալ կարի չափաւոր քան այնքին՝ որք սշխատին ՚ի ծանր գործս արտաքոյ տան : Այլ են կերակուրք ինչ , որք են յոյժ անդ արար և դիւրամարս գիւղականաց , այլ դժուարամարս և վնասակար քաղաքացոց : Այլ ընդ ներհակն զոր ինչ կերակուր քաղաքացիք կարեն առնուլ , այնու դիւղացիք սովամահ լինին :

Չէ պարտ կերակրոց լինիլ միշտ միատեսակ , զի ՚ի կիր առնուլն մշտապէս զմիատեսակ կերակուր , կարէ պատճառել զզուանս , յորմէ յառաջ գայ կորուստ անորժակի և անմարսութիւն :

Ինտութիւնն սրտորաստեալ է վառն մեր զպէս պէս տեսակ կերակրոց , ընդ նմին և շնորհեալ է մեզ ըստ տեսակաց կերակրոց և զուր անորժակս

՚ի վայելել զայնս . վասն որոյ մի որ հաստատեացէ զինքն ՚ի մի տեսակ կերակուր միայն : Այլ միայն որք անտաշեալ են ցուօք , պարտին զգոյշ կեալ յայնց կերակրոց , որք ունիցին զզօրութիւն առաւելոյ զցաւն : Արեւակուր և թեթեւ որք ըմբռնեալ իցէ ՚ի յօգացաւութիւն , չէ պարտ յաճախել ՚ի գինի , ՚ի կարող արգանակ կամ ՚ի հիւթ հանեալ յեփեալ մտոյ , ՚ի միս կովու . և ոչ ՚ի կծու , ՚ի թթու և ՚ի բարի համեմունս :

Այսպէս և որք նեղին ՚ի քարէ և ՚ի խճէ , պարտին ամենայնիւ զգոյշ կալ կծուային , թթուային և այլ վնասակար կերակրոց յիշատակելոց ՚ի վեր : Այլ նոքա , որք ունին քոր , քոս և բոր , պարտին միանգամայն ՚ի բաց կալ յաղեալ և ՚ի ճխտալ մսեղինաց : Այսպէս իմա և վասն ամենայնի :

Չիք այլ հաստատուն կարգ և կանոն քաջառող կեցութեան մարդկան քան կերակրոց մեր լինիլ թեթեւ դիւրամարս , անդարար և չափաւոր : Օրվասն առողջութեան անձին ոչ միայն գիտել պարտ է՝ կերակրոց լինիլ անվնասակար . այլ և հարկ է ՚ի կիր առնուլ զայն կարգաւ և ՚ի կանոնեալ ժամանակի , այսինքն՝ յառուրն երկիցս կամ երկուս , ոչ նախ քան զքաղցնուլն . և ոչ անդր քան զյագենալն :

Անալին յոյժ , որք կարծեն երկար պահեցողութեամբ առաւել առողջ կեալ , զի յորժամ ստամոքսն և փորտիքն զագարին ՚ի տարածմանէ կերակրոց , կորուսանեն զպատշաճ կարողութիւն ընդարձակման արեան , որով նուազին և լցեալ հողմով կորուսանեն իսպառ զանորժակ իւրեանց . վասն որոյ եթէ պահեցողք և եթէ շուտապէս կորուսանեն զկարողութիւն մարսողութեան , որոյ բազում են չարհետեանք :

Ոմանք՝ որք կարի մոլեալ են ըզ-
հեա թէյի կէլով միայն կտոր մի հա-
ցիւ, որք և ՚ի բազում ժամս մնան
առանց ուտելոյ զայլ ինչ, անկասկած
փութով կորուսանեն զսիրտակ իւ-
րեանց որով ազականին հիւժք մար-
մնոյ, ըսուն աղիքն հողմով, և հետե-
ւին վնասակար հիւանդութիւնք :

Ար սովոր է ընթրել ՚ի տարածա-
մու երեկոցեան, պարտ է ընիլ այնր
կարի թեթեւ և դիւրամարս, զի թե-
թեւ և դիւրամարս ընթրիքն հան-
գիտտ քուն բերէ, և սայ փութով
յառնել ՚ի քնոյ, և ՚ի յառաւօտուն
ունիցի զտուր ակորտակ ՚ի նախաձա-
շել և դիւրեաւ մարսել :

Իազում հիւանդութիւնք մանա-
ւանդ սաստիկ ջերմն պատճառին ՚ի
ներգործութենէ յորդ արեան հիւ-
թոյ կամ ՚ի լուծենէ անօթոյ : Օ ՚ի
կարող անձինք՝ որք են քաջառողջ մար-
մնով, առհասարակ ունին յոյժ առա-
տութիւն արեան և այլ հիւթոյ, և
յորժամ յանկարծ յաւելուն զայնս
խճողելով կամ ծանրաբեռներով ա-
ռատ և կարի աննգարար կերակրովք,
անօթք մարմնոյն կարի յոյժ տարա-
ծեալ ընին, և աստի խանգարի կանո-
նաւոր շրջանառութիւն արեան և յա-
ռաջ գայ բորբոքումն, և յայտմանէ է,
զի բազումք ըմբռնին ՚ի սաստիկ տագ-
նապոզական ջերմն, կամ ՚ի կաթումն
զկնի խրախճանի կամ շուպտութեան :

Վմենայն առատ և յանկարծական
փոփոխութի կերակրոց են վտանգա-
ւոր յոյժ, քանզի զորս երկար սովո-
րութեամբ ստամոքսն բնաւ սրեալ է
՚ի մարսել, ոչ կարէ տանիլ յանկարծ
փոփոխութեան անսովոր կերակրոց,
բայց եթէ որ ստիպիցի փոփոխել
զկերակուրն, պարտ է առնել զայն ա-
տիճանաւ, քանզի յանկարծ փոփոխու-
թիւն աղքատիկ և պարզ կերակրոց,

առհասարակ բազմախորտիկ և ՚ի կարող
կերակուր, և կամ ընդներհակն ՚ի հա-
րուստ՝ բազմախորտիկ և ՚ի կարող կե-
րակրոց առ աղքատիկ և ՚ի պարզ կերա-
կուր, հնար է կենսական գործադրու-
թեան մարմնոյ շրջիլ ՚ի վտանգ մեծ
և երբեմն յանկարծակի՝ առ ՚ի մահ :

Ի վերջ ամենայնի գիտելի է, զի
կարգադրութիւն կերակրոց, որք ՚ի վեր-
անգր յիշեցան, չէ պարտ այնպէս հաս-
տատել ՚ի միտտ, որպէս թէ ամենայն
փոքրիկ փոփոխութիւն կերակրոց դա-
տապարտելի է կամ խտապէս յոյժ վը-
տանգաւոր, քանզի անհնարին է ամե-
նեցուն ՚ի բոլոր կեանս ՚ի բայց կալ ՚ի
պատահական առ աւելութենէ և կեալ
յոյժ կանոնօք, կարծելով թէ՛ փոքրիկ
խտտորումն ինչ է վտանգաւոր, վասն
որոյ կարէ փոքր խոհեմութեամբ վա-
րելով՝ առնուլ զկերակուր կամ ըմ-
պելլա երբեմն փոքր և երբեմն շատ
քան զսովորականն իւր, յամենայն ժամ
միտ գնելով չափաւորութեանն :

ԳԼՈՒԽ Ե .
(Դ :

Վնառողջ օգն ոչ պակաս քան զայլ
ամենայն պատճառսն յիշատակեալս ՚ի
նախընթաց գլոս իսն՝ ամէ է ՚ի մեզ ըզ-
պէսպէս հիւանդութիւնս : Մարդիկ
առաւել մտազիր ընին վնասակար
ուտելեաց և բնոյլեաց քան անստողջ
օգոյ, որ ներշնչի ՚ի թոքն, և որ դրեթէ
բազում անգամ բաց ՚ի վնասելոյ ա-
ռողջութեան՝ պատճառէ եւս զյան-
կարծական մահ :

(Դ զն նման ջրոյ ունի զմեծ մասն
մարմնոյ, յոր գոյ ՚ի միութիւն, և բա-
զում անգամ ըսու զայն վնասակար
որակութեամբ, որով պատճառի յան-

կործակի չնչարգելէ կամ սպառումն չնչայ : Բայց բաղումք բնաւ ոչ զգուշանան յայսպիսի բուռն ներգործութենէ օգոյ : Փոքր վնասակար ներգործութիւն վատ օգոյ մեծ վնաս պատճառէ առողջութեան մարդոյ . վասն որոյ Բանաստեղծք առ ՚ի զգուշութիւն խօսիլ առտ սակաւութ, և ցուցանել զվտանգան, որք յառաջ քան անտի :

Հնար է օգոյ լինիլ վնասակար բազում եղանակաւ, զի որ ինչ փոխէ առտիճան օգոյ առ ջերմ, առ ցուրտ առ խոնաւ, և այն, առնէ զայն անառողջ : Օրր օրինակ՝ յորժամ օգն է կարի ջերմ, ճապարկէ զճրային մասն արեամբ զօրացուցանէ զմաղձն, և զհիւթան առնէ հրատապ և թանձր, ուստի յառաջ գայ մաղձային տասողական ջերմին և Քոլէրայ-Սորբուս :

Իսկ յորժամ օգն է կարի ցուրտ, արգելել զթորումն քրտանց, պնդէ զթանձրագոյն մասն մարմնոյ, և խրտացուցանէ զհեղուկս, ուստի յառաջ գայ հարբուղիս, հաղ և այլ վնասակար ցաւ ՚ի լանջս և ՚ի կոկորդոս :

Եւ յորժամ օգն է կարի խոնաւութ, ապականէ զառաձգական թանձրագոյն մասն մարմնոյ, յորմէ յառաջ գայ մաղձային և լյծ խառնըւածութիւն մարմնոյ, և պատճառէ տենդ, ներքին ջերմ և ջրգողութիւն : Աւր խմբեալ են բաղմութիւն մարդկանց ՚ի միում սեղեւջ, եթէ պարաուութիւն օգոյ չէ անգ աղատ, փութթով փոխի այն յանառողջ գրութիւն : Եւ յայտմանէ է, զի փափկասուն կամ տկարամարմին անձնք գիւրեաւ ըմբռնին ՚ի հիւանդութիւն, կամ ՚ի նըւաղումն ՚ի մէջ բաղմասուռն եկեղեցոյ կամ ՚ի բաղմաժողով տեղոջ, և կամ ուր օգն վնասի չնչմամբ յոգնախումբ մարդկան հրով, ճրագով, ծըխով, և այլ վնասակար հոսով :

Ի մեծամեծ քաղաքն բազում ինչ ապականէ զօգն, և պատճառէ մահաբեր հիւանդութիւն բնակչացն :

Նախ ՚ի ներշնչելն կրկնակի օգոյ երկրորդ՝ բեռնաւորիլն այնր ծծմբով, ծխով և այլ վնասակար հիւթովք, և երրորդ՝ շարունակ գողորչեօք անթիւ ապականեալ իրաց, այսինքն՝ աղբանոցաց, սղանդանոցաց և այլ աղտեղի տեղեաց :

Եւ մենայն կարեւորագոյն զգուշութիւն հարկ է առնել վասն փողոցաց քաղաքի, զի իցեն այնք բաց, լայն և ընդարձակ, յորս կարիցէ խաղալ ազատ օդ, զորս և պահել պարտ է միշտ մաքուր . քանզի ոչինչ այնպէս ապականէ զօդ քաղաքի, որպէս աղտեղի փողոցք, յորոց և պատճառին պէս պէս հիւանդութիւնք և մահտարածամ : Յայտնաի դարս և ՚ի ժամանակս ոչ երբէք փոյթ կարան արգելել ըզկարի վնասակար սովորութիւնն տարածեալ յամենայն ուրեք, այսինքն՝ թաղելն զմեռեալս ՚ի մէջ բաղմաբնակ քաղաքի և եկեղեցեաց . քանզի բիւրաւոր նեխեալ զիք գոլով ամփոփեալ ՚ի հող մերձ յերեսս երկրի, և օգոյ ունեւով ընդ այն յարակցութիւն, անհնար է եթէ ոչ արատեցի, և այսպիսի աղտեղեալ օդ յորժամ ներշնչեցի ՚ի թոք կենդանեաց, անկասկած պատճառեացէ զպէսպէս վտանգաւոր հիւանդութիւնս :

Աւր օգն անշարժ է, անդ և անբարեխառն, ուստի ամենայն արդեւանք կամ բանաք, որք փակեալ են յամենայն կողմանց, ոչ միայն բանտարկեալքն ըմբռնին ՚ի մահաբեր ջերմն, այլ և տարածի ակտ նոցա ՚ի բաղումն արտաքոյ բանտին որք շուրջ զնովաբնակին : Յայսպիսի դրութեան են և խղճականք ՚ի յաղքատիկ բնակարանս, որոց գոլով բնակեալ յաղտեղի

տեղ-ով ՚ի մէջ ցած և անձուկ իրը ճթի ըմբռնին ՚ի պէտպէս վնասակար հիւանդուիս, պատճառեալս ՚ի թու նաւոր օդոյ, յորս գրեթէ չիք որ, որ վայելէ զառողջ կեանս, և մանկունք նոցա հասարակապէս մեռանին ՚ի մատաղ հասակի : Ամենայն զգուշաւոր մտադրութիւն հարկաւոր է ամենեցուն վասն բնակարանի, զի իցէ այն ընդարձակ և օդամուտ, բանզի անհար է տան միոյ լինիլ առողջարար, եթէ ոչ խաղայ ՚ի նա օդ ազատ, վասն որոյ պարտ է փոյթ տանիլ յամենայն աւուր խաղացուցանել ՚ի տունն եւ յամենայն սենեակս զօդ, բանալով զդրունս և զհանդիպակաց պատուհանն :

Զէ պարտ կանուխ յարդարել զանկողինս . այլ յորժամ յառնէ որ ՚ի քրնոյ, պարտ է առժամայն ՚ի վայր շքեղութիւն զայն դնել յանդիման զովարար օդոյ բայեալ պատուհանի զօրն ողջոյն, որով ՚ի բաց վտրեցի վնասակար գուրջի փակեալ օդոյ յեցեալ յանկողինսն, յորմէ և ազատ մնացէ ՚ի վնասուց առողջութիւն բնակչայն : Օրն՝ որ գադարեալ է ՚ի հանգստարանս, ՚ի գուբս, ՚ի ստորերկրեաց շտեմարանս և յայլ այսպիսիս, վնասակարէ յոյժ : Օր զայս տեսակ օդ պարտ է համարել իբրեւ զմահացուցիչ թոյն, որ բազում անգամ սպանանէ զմարդ գրեթէ իբրեւ զկայծակն : Վասն որոյ հարկ է ըստ ամենայնի և յամենայն ժամ կարի բլբլ գոյշ կալ ՚ի բանալն զստորերկրեաց շտեմարան ինչ և ընդ երկար փակեալ զգուբ, զտուն, զսենեակ, զամբարանոց և զայլ խոնաւուտ տեղիս, յորս ՚ի մտանէն պարտ է նախ տեղի տալ խաղալ օդոյ ՚ի նոսա առ վայրկեան ինչ : Ննջարան մեր պարտ է լինիլ ընդարձակ, օդամուտ և ազատ յամենայն աղտեղի իրաց և ՚ի վնասակար հատոյ, բան

զի ՚ի կիր առնու զայն միայն ՚ի գիշերի, յորժամ փակեալ են ամենայն դրուեք և պատուհանք նորա, զի եթէ իցէ այն անձուկ, ուր և վառի ճրագ, և երբեմն պահի սմխահուր, պատճառեալ է մեծ վնաս առողջութեան, նա և երբեմն նուազումն կամ մահ :

Որք պարտաւորին վասն գործոց ծախել զօր իւրեանց ՚ի բազմախումբ քաղաքի, բարւոք լիցի վասն նոցա, եթէ կարիցեն ննջել ՚ի գիշերի արտաքոյ քաղաքին, ուր շնչեալ տալտու և բարեխառն օդ ցերեկեան օգնէ անբարեխառն օդոյն, զոր նոքա շնչեն, և եթէ անընդհատ պահեացի զայս օգտաւէտ սովորութիւն, երբէք ոչ վնասեացի առողջութիւն նոցա :

Տունք շքեղատեալ բարձր որմովք չեն առողջարար, զի արգելեալ ազատ շնչումն օդոյ, առնէ զայն խոնաւուտ, և ամենայն խոնաւուտ տուն կամ սենեակ վնասակար է առողջութեան, զի պատճառէ հարբուղիս, ջերմն, յօդացաւութիւն, և այլն : Այնպէս և վնասակար է, եթէ շուրջ կամ մերձ տան կայցեն տունիք ծառոց, զի ծառք խափանեալ ազատ շնչումն օդոյ, խոնաւուտ առնեն զտունն :

Հաճելի են յոյժ աչոյ ամենեցուն գեղեցիկ կանաչապեղ ծառք, և ամենայն որ յօժարի ունիլ ՚ի տան իւրում՝ զտունիս ծաղկանց և պտղոց . բայց և պարտ է միշտ պատշաճ տարակաշուրթեամբ հեռի լինիլ ՚ի բնակարանէ, զի մի խափանեցեն զարեւ և զօդ :

Տունք՝ որ կառուցեալ են ՚ի վերայ ցած և ճախնային գետնոյ, կամ մերձ լճոյ, որոյ ջուր մնայ միշտ անշարժ, կարի անառողջք են : Օր ցած և ճախնային գետինք և զադարեալ ջուրք ոչ միայն խոնաւուտ առնեն զօդ, այլ և ծանրացուցանեն զայն ալ պականեալ գուրջեօք, յորոց պատճա

ռին վատթարագոյն և մահաբեր հիւ
ւանդութիւնք : Բայց որք պարտաւ
ւորեալ են յայտպիտի տեղւոջ բնակիլ
ընտրեացեն զչոր և բարձր անդիս և
պահեացեն զայն միշտ մայրուր յամե
նայն աղտեղի իրաց :

Եթէ զովարար օգ հարկուոր է
վասն առողջ անձանց, որչափ եւս հիւ
ւանդաց, որք բազում անգամ կորու
սանեն զկեանս ՚ի պահառութենէ շն
չառութեան ազատ օգոյ :

Վնասակար կործիք՝ որով բազումք
բարի համարին պահել զհիւանդին ՚ի
ջերմ և ՚ի փակեալ սենեկի, յամանս
այնչափ սաստիկ է, որչափ դժուարաւ
կարէ որ մտանել ՚ի սենեակ հիւան
դին առանց մերձ գոլոյ ՚ի նուազիլ
՚ի կարի ջերմութենէ և ՚ի հեղձու
ցիչ հոտոյ աղտեղութեմ հիւանդին .
և թէ այսպիսի դրութիւնն որչափ վը
նասակար է հիւանդին, կարէ որ դիւ
րաւ դատել :

Չիք այնչափ օգտակար հիւանդին
դեղ բժշկաց, որչափ խնամ զովարար
օգոյ, և քան զամենայն դեղ առաւել
կազդուրիչ խոհեմ և պատշաճ հոգա
տարութիւն ամենայն որպիսութեան
նորա :

Չէ հարկ և բանալ զգրունս և ըզ
պատուհանս սենեկի հիւանդին մի
անգամայն, այլ թոյլ տացի մտանել ՚ի
նս զովարար օգ աստիճանաւ . և եթէ
կայցէ կից սենեկի հիւանդին այլ սե
նեակ, բացցեն զգրունս և զպատու
հանս այնորիկ, մտանել մեղմ օգ ՚ի
սենեակ հիւանդին :

Հնար է և մեծապէս զորացուցա
նել զօգ սենեկի հիւանդին սրսկերով
անդ ՚ի դեանի շուրջ զանկողնով ստէպ
զքացախ կամ զհիւթ լիմոնի : Նաև
երբեմն փոխել զսենեակ և զանկողին
և ազատ պահել զհիւանդին յաղտեղի
հանդերձից և ՚ի դարչ հոտոյ :

ԳԼՈՒԽ Զ .

Կրթութիւն :

Թէեւ մասնաւորապէս ծանուցաւ
ուրեք ուրեք ՚ի նախընթաց գլուխն
զկարի պիտանութենէ կրթութեան
ընդդէմ զանազան հիւանդութեանց
և վտանգաւոր ախտոց, սակայն հար
կաւոր համարիմ խօսիլ աստ զայնմա
նէ ընդարձակագոյնս և ցուցանել իսկ
զարժանաւորութիւն այնր :

Յայտ իսկ է ՚ի կազմութենէ մարդ
կային մարմնոյ, թէ այնչափ պիտանի
և հարկաւոր է կրթութիւնն վասն
պահպանելոյ առողջութեան, որչափ
կերակուրն ՚ի սնունդ կենաց :

Այնքիկ, որք ՚ի կարօտութենէ ապ
րուստի կենաց աշխատին վասն օրա
կան հացի, ոչ միայն են քաջառողջքն
՚ի մարդկանէ, այլ և երջանկագոյնքն
քան զամենայն մարդիկ : Այլ զայս բա
րեբազդութիւն միայն վայելեն այնու
քիկ, որք կեան մշակութեամբ երկրի
և ծանր վաստակօր :

Յոյժ բազմանալն նորատի գաղ
թական ժողովրդոց և երկարակեցու
թեան մշակաց յամենայն տեղիս յայտ
նի փորձ է մեզ, թէ կրթութիւնն է
յոյժ առողջարար և կարի պիտանի
գործառնութի ՚ի պէտս կենաց մերոց :

Յօժարութիւն կրթութեան ին
քնին ցուցանի ՚ի մեզ գոլ յոյժ նախ
նական, և սյնպէս սաստիկ է այս ըս
կղենական ուսանելիք մարդոց, որպէս
զի առողջ մանկան միոյ՝ եթէ և դնիցի
պատիժ առաջի, անհնար է արգելուլ
՚ի կրթութենէ :

Այր շարժողութեան մերոյ է յայտ
նագոյն մեծ փորձ վասն օգտի առող
ջութեան անձին առ որ ամենայն որ
հակամիտեալ է :

Ինուծիւնն չէ ՚ի զուր տպաւուրեալ ՚ի մեզ զայս յօժարուծիւն , ուրոյ երեւի լինիլ ընդհանուր օրէնք տարածեալ յամենայն տեղիս ՚ի վերայ բովանդակ կենսական արարածոց , քանզի ոչ ոք ՚ի կենդանեաց կարէ վաշելել զառողջութիւն կամ գտանել զգարման կենաց առանց կրթութե :

Իատարկութիւնն կամ պարասրուգութիւնն ոչ երբէք սխալի ՚ի պատճառել զհանրական թուրութիւն թանձրագոյն մասին մարմնոյ , յորմէ տրամադրի մարմինն առ անթիւ հիւանդութիւն , յախտ և ՚ի ցաւ : Օ ՚ի յորժամ թանձրագոյն մասն մարմնոյ նուազի , ոչ մարսողութիւն , ոչ կղկղանք կամ անջատումն հիւծոց մարմնոյ և ոչ աւերուած կարեն պատշաճապէս կատարել զիւրեանց կանոնաւոր ընթացքս . վասն որոյ անշուշտ տեղի տան վատթարագոյն հիւանդութեանց և պէսպէս անբուժելի ախտից :

Օ իմրդ կարէ որ վայելել զառողջ կեանս , կամ կեալ առանց իրիք պահասութեան ցաւոց , որ զօրն սղջոյն մնայ դատարկ յեցեալ ՚ի հանգուցիչ աթոռ և ՚ի գիշերի ՚ի յանկողնոջ : Այսպս վնասակար սովորութիւն գրեթէ հասարակ է ՚ի մէջ բնակչացն երեւելի քաղաքաց , յորոց ոմանք բմբռնին յանգամալուծութիւն և ՚ի պէսպէս տենդս :

Պարտ է առնուլ զկրթութիւն ՚ի բաց օգի յամենայն առաւօտու , և որ չկարէ առնել զայս յիրիք պատճառէ , արասցէ զայն ՚ի տան պէսպէս շարժողութեամբ անձին , ձեռաց և ոտից . չէ հարկ ումէք հաստատել զինքն յոր և իցէ յատկացեալ տեսակ կրթութե : Այլ բարեգոյն եղանակն է առնուլ զայնս փոփոխակի , կամ ՚ի կիր առնուլ զայն ընդերկար , որ առաւել պատշաճ իցէ կարողութե և կազմուածոյ իւրոյ :

Տեսակք կրթութեանց՝ որք առաւել առողջարար ներգործութի տան գործարանաց մարմնոյ՝ են ձեմեղն , հեծանեղն ՚ի ձի , բրել , փորել , տնկել , չփել կամ մայրել զկահ և զկարասիս տան : Արբի ցաւալի է , զի գործունեաց և այրական զուարճալի զբօսանք այժմ՝ սակաւք ՚ի կիր առնուն : Օ ՚ի զուարճալի զբօսանքն առաւել կրթել տան մարդոց քան զայլ ամենայն կրթութիւն , և այս մեծապէս նպատուէ առողջութեան այնոցիկ , որք չեն ՚ի ներքոյ պարտաւորութեան ՚ի ձեռն աշխատասիրութե գտանել զհաց իւրեանց , որպիսի են մեծատունք եւ կարող անձինք . և այս զուարճալի զբօսանք կայանան ՚ի յորսորդութիւնս , ՚ի զընդախաղութիւնս , ՚ի ռմբասխաղութիւն , ՚ի պար , ՚ի լուղ , ՚ի խաղ , և յայլ այսպիսիս : Օ ՚ի այս կրթութիւն անգամոց արձակէ զբրտունս և զայլ կղկղանս մարմնոց , կարողացուցանէ բութեմն , տայ զպնդութիւն և դիւրաշարժութի բովանդակ մարմնոյն , սրէ զախորժակն և օգնէ մարսողութեանն :

Չէ պարտ անդր քան զչափ կարողութեան մարմնոյ ՚ի կիր առնուլ զի վեր յիշատակեալ կրթութիւնն , որպիսի եղանակաւ և իցէ , քանզի կարի վատտակիին բառնայ զօգուտ կրթութեան :

Չեղգութիւնն ոչ միայն պատճառէ զպէսպէս հիւանդութիւնս , այլ և առնէ զմարդ անպիտան ընկերութե . քանզի միտք մարդոց գոլով ոչ հաստատեալ առ պիտանի խնդիր ինչ , միշտ մնորի զհետ անբանութեան , յորմէ բղխին ամենայն չարիք և թշուառութիւնք :

Անհար է ումէք վայելել զառողջութիւն , որոյ բրտունքն ոչ արտաթորի միշտ , և այս ոչ իւրք արգելեալ լինի , եթէ ոչ ՚ի զանցառութեան կրթ

Թու թեանց , Վանդի Թարախք մարմնոց , որք պարտին բրտամբք վարել յարտաքս , յորժամ արգելեալ լինին ՚ի մարմնի , ապակամին հիւ թք մարմնոց , յորմէ պատճառի յօղացաւ թիւն , ջերմն , հարբսւղն և այլ պէտպէս ասորք , զոր միայն կրթու թեամբ հը նար է փարատել :

Հեղինակ մի , ՚ի գեղեցիկ բանախօսութեան իւրում ՚ի վերայ առողջութեան , ասէ , ամենայն վտիտք , վատառողջք և պէտպէս ցաւազարք առ ՚ի բժշկիլ , պարաին զմասն ժամանակի իւրեանց ՚ի կիր առնուլ կրթութեամբ : Բայց ես ոչ միայն ցվտիտս , ցվտառապջ և ցցաւազարք , այլ և առհասարակ ամենեցուն ասեմ , որք ոչ ունին բը նական զկրթութիւն , այսինքն՝ ուսումնական անձինք , նատողական արուեստաւորք , կրպակաւորք , և այլն . պարաին կարգաւ և առանց զանցառութեան առնուլ զկրթութիւնն որ պէս զկերակուր ՚ի սնունդ կենաց իւրեանց , և զայս հնար է ամենայն ումեք կատարել առանց խախտելոյ ըզգործ կամ զժամանակ իւրեանց : Այլինչ այնչափ առաւել փնաս է առողջութեան , որչափ գարչ սովորութիւն ընդ երկար մնալոյ յանկողնի ՚ի ժամ առաւօտու , և այս գրեթէ հասարակ սովորութիւն է բնակչացն մեծամեծ քաղաքաց , յորոց բազումք հազիւ յառնեն ՚ի քնոյ նախ քան զու թն կամ զինն ժամ առաւօտուն , որք են յատկապէս դառք տիկնանց , և այս իսկ ժամանակ է կրթութեան , յորում ստամբսն դատարկ է և զօրութիւն մարմնոյն նորոգեալ ՚ի քնոյ : Ըն զի առաւօտեան օդն պնդէ և կարողացուցանէ զջիւղն : Ըս այս օգնէ առաւօտեան լուզանայն ցուրտ ջրով կամ հեղով զայն ՚ի վերայ գլտոյ :

Ըսամ փաստակար սովորութեան

մնալոյ յանկողնի ընդերկար , հնարէ փոխիլ ՚ի կարգաւ որ ժամն , յորժամ յառնիցէ սք ՚ի քնոյ ՚ի վեց կամ յեօթն ժամու առաւօտուն , և ծախեսցէ զվի կամ զերկու ժամն հեծանելով ՚ի ձի , ձեմելով կամ պարապելով յայլ գործունեայ զբօսանս կամ ՚ի զբազմունս արտաքոյ տանուր գտցէ զինքն առողջուրախ և զուարթ ՚ի բոլոր օրն , ըստասցի և ասորժակ ուտելոյ և սլնդեացի կազմութիւն մարմնոյն . ապայս հաճելի դրութիւն փութով եղիցի նմա մշտական սովորութիւն , և չիք ինչ որ կարէ պահպանել զառողջութիւն մարդոյ , քան զայս սովորութիւն փութով յառնելոյ ՚ի քնոյ և շարունակ կրթութեան :

Պարապորդք ունին միշտ զգանգատ ստամբսի , փքացաւութեան , անմարսութեան , պակասութեան ասորժակի , և այլն , որք ոչ այլով իւրէք բժշկին , եթէ ոչ կրթութեամբ :

(Շարունակութիւնն)



ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՅ ԽՆԴԻՐՐ

(Շարունակութիւն , տես թիւ 8)

« Չեր Վ սեմութեան հիմակ գըսնուած վանքին պարսպէն դուրս չէ Սար Լապուպայ վանքը , պատասխանեց Սրբազան Պատրիարքն . այս վանքս է որ կը ներկայացնէ ընդհանուր Հայոց ազգը , ուր այսօր Չեր Վ սեմութիւնն այցելութիւն ընելու բարեհաճեցաք , և եթէ կամք կ'ընէք , յօժարութեամբ կ'ընդունիմ զՉեր Վ սեմութիւնը պտղոցընելու աշխատութիւնը :